Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Փետրուարի 28-ին. Թիֆլիս. № 9.

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ կովկասեան հարցապնդում



*Գրաֆ-Բոբրինսկի.—Պարոններ, անդամներ Պետական Դումայի. Դուք խօսում էք այնպիսի բաների մասին, որոնց պատասխանելու է հարկաւ մեր սիրելի և համեստ ընկեր Յով. Սաղաթէլեանը, բայց քանի որ նա այդ շնորհքից զուրկ է, ես ինձ պարտաւոր եմ զգում, հերքել այն ասածները, որոնցով չարախօսում է հայ ազգը, հենց միմիայն նրանով որ հայ ազգի յեղափոխական տեմպերամէնտը կարելի է չափել հենց Սաղաթէլեանով.*

## Ե Վ Ն Օ (Եւգենիյ) Ա Զ Ե Ֆ Ը



1905 թ.



1909.

## Գ Է Ո Ր Գ Ե Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի Շ Ո Ւ Ր Ջ Ը



Տեղեկութիւն է ստացւած, որ Մեսրովբ հայր սուրբը ջանք է թափում տապալել տեսուչ Մի-նաս Բէրբէրեանին, որպէսզի ինքը նորից վերատեսուչ լինի…

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, և գտնւում է Մասկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“ Московская № 19

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Խաթաբալային բաժանորդ կարելի է գրւել խմբագրատանը Մասկովսկայա № 19-ը և «Գուտտենբերգ» գրախանութում։

Փետրւարի 24-ին վախճանւեց

**ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻՆ**

Յուղարկաւորութիւնը դէպի Վանքի մայր եկեղեցի լինելու է կիրակի Մարտի 1-ին առ. ժամ 10-ին

## ԻՄ ՈՒ ԻՄ ՓԷՉԱՏԸ

Շատ բան էի իմացի, շատ բան էի կարթցի, մազըրած վունց մէ տիղ չէի տեհի, վուր մարթուս փէչատը ուփրօ ււտան քանց թէ մարթուն՝ իրեն։

Իս էս բանից էլ տեհայ, էս բանից էլ իմացայ, սիրելինիր ջան։

Տօ, էնօր՛ը, Թասմ շափաթ իրիգուն, մէ լաւ ադիղ աթալէր ըղի հիդ, անեմէն դուս էինք գալի, վուր դնանք ժամ, Աստծու հիդ մէ քիչ իղթիլաթ անինք, գարդնիրս ասինք, օղորմութին խնթրինք։

Ջէր գլխնիրս անեմէն չէինք հանի, ջէր մեռնակ մէ վուտն էինք դուս դրի, վուր ասչիւս շաիկաւուր սալդաթնիր ցցւեցին, «ստոյ» կօսէ, ասի՝ «ստոյիմ». «նի սմեստա» կօսէ, մինք էլ ասինք՝ «նի սմեստա». էտենց խելիմ վուխտ կաղնեցինք, ասի «ըշտօ տակոյ», սալդաթը ասից՝ «ըլիւ ինստ» կօսէ, ասի «աըլիւ ևստօ տակոյ» ասից՝ «պասպորտի» ու փիրչը, մէ քիչ էլ վուր մուլափ ուինք, տեհանք վուր մէ ափիցար, մէ ակալօշնիկ, մէ էրկու իրեք գարադավ, մէ տաս սալդաթ էկան ու իրենց հիդ էլ մէ քանի մարթ էին բիրում։

—Վի կտօ տակոյ, կօսէ, հարցրից ափիցարը։

Էնգիրս ասից վուր ինքը լաւ մարթ է, հէրով, մէրով, բարեգմերով, օղլուշաղով օրինաւուր քաղկցիք ին։

—Չաօ գեղայիշ, կօսէ։

—Գրաչէնի պիշիմ, նաստայաշչի աստւակատ իմ, կօսէ։

—Բաշպորտ Եսա, կօսէ։

—Իժում վճնից, պէրվի սորտի. ու հանից շանց ուփց մէ Թուխտ, վուրդի ասում էր, վուր փլան քեասը պէրվի սորտի աստւակատ է ու ինքն էլ իխստ օրինաւուր քաղկցի է։

—Մաշ վի խտօ տակոյ, ափիցարը իժում ինձ հարցրից։

—Եմ, ասի։

—Դա, վի խտօ տակոյ։

—Չալավէկ, ասի։

—Վիդիմ չալավէկ, մադրած խտօ։

—Խաթաբալի ուստաբաշի։

—Կակօյ խաթաբալա

—Տակօյի խաթաբալա, կատուրի բիվաէտ բաղնի բաղնի, խան ժոլտի, խան կրասնի, խան չորնի, խան բէլի, ասի։

—Եա վաս նի պանիմայու կօսէ։

—Ջաչեմ նի պանիմայշ, ասի, տի Տիփլիս դնայիշ ասի. ադին Տիփլիս եսա, ադին Խաթաբալա ասի։

—Բաշպորտ Եսա, կօսէ։

—Մոյ բաշպորտ դոմը եստ, ասի, տամ պապիրան՝ շտօ եա՝ Գասպար աղա Կալատուզով, ուստաբաշի Խաթաբալա. մօյ դոմ բըդդեօ, ասի, եա խարոշի չալավէկ։

—Պաչեմու կարմանի նէտ բաշպորտ, կօսէ։

—Պատամու ասի, շտօ նի նադա ասի, Թէ վսէ դնայիտ ու իշշօ պատամու ասի, վուր մէ բաշ «րուսկի վերիս» եալի սկաժուտ, ու բաշպորտ մօյ տոժէ վազմութ, իժում պայդոտ չալավէկ սուրիտ. իժում վինովնիկ նայդուտ, սանիս բուդիտ մօյ բաշպորտ, տագդա սկաժուտ շտօ եա սուքին, պատամ իդի ու սկաժի, շտօ եա նի բիլ. տուտ բաշօյ փաթերակ բուդիտ ասի։

—Դա եստ կօսէ. ի չունքի բաշպորտ նետու կօսէ, մաշ իդի պօլիցա նաչուայ կօսէ։

—Վա, նի պայդու ասի, շտօ տի սաբսեմ մարսադ գավարիշ ասի, եա պօլիցա ասի։

—Նի սլավօ կօսէ։

Ակալօշնիկը մօղեցաւ ասից թէ՝ էտ չալավէկ եա զնայիմ, գօրոդնիկն էլ էկաւ ասից թէ՝ օն նաշ խազէյին, կօսէ, համա վունչիշ չօտկից

—Զաչեմ բաշպորտ նետ կօսէ։

Ջէր էլի էնդի էինք կանգնած, վուր մէ էրկու խաթաբալիստնիր էկան, ուզում էին բէղակցիէն մանի։

Սալդաթը ձէն ուից՝ «ստօյ աբվալ եստ» կօսէ։

Տղէրքը կաղնեցին։

Իժում միր աղերքիցը մէ էրկուսն էլի էկան։

Սրանց էլ կաղնեցրին։

—Բաշպորտ եստ, կօսէ, հարցրից ափիցարը



ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻՆ

—Բաշպորտ նետու, համա բիլէթ եստ, ասին միր աղէրքը։

—Կակօյ բիլէթ, կօսէ։

—Վօտ, տակօյի բիլէթ, ասին ու հանեցին մէ մէ պատիկ կարդօնի կտուրտանք, վուրդի գրած էր իմ սակուԹար ձեռով՝ վուր փլանքեասովը չունքի խաթաբալիստ է ու չունքի բէղակցիումն էլ խանդիխան ըլում է, էտու համա էլ խնթրում իմ վուր Թիատրոնիրում, ցիրկերում, բալերում, ժողովքնիրում, քէլէխնիրում թողնին վուր ազատ մտնին ու դուս գան վունց վուր իրենք գուզին. տակն էլ համ ձեռք էի քաշի, վուր ուստաբաշին իս իմ ու համ էլ փէչատ էի խփի։

Ափիցարը վիկալաւ դէս մաիկ ուից

դէն մարդ ունից ու իմ վուր տնհաւ վուր փէչաւռ էլ կայ, էնչափռնեէս հրամանք արից, վուր միր աղէրանցը թօղնին գնան վուրդի ուզում ին, միր աղէրքն էլ ինձ մասխարա գցելով թօղին գնացին:

Էս վուր տնհայ, ասի՝ վայ մէ վայ մէ, դուռնա բանը էն թուռը է, վուր իմ փէչաւր ուփրօ ին հաւատում, բան թէ ինձ, ասի:

Համա ինչ կօնէի, բանը էտ թուռը էր:

—Աֆիցար ջան, ասի, էտ մօյ փէչաւռ ասի, էտ մօյ պառպխալ ասի, իմ պուսաին, թէ ասէ պուստի ասի:

—Վա՛, տէրէ բաշղօրա, ան բիլէթ նեստու կօսէ:

—Էտի բիլէթի հա զալ ասի:

—Էս նի զնայիմ կօսէ:

—Վառ ասի զակօն նէտու. մօյ փէչաւռ վէրիշ, թէ նէ վերի՞շ:

—Զակօն եստ կօսէ ու տակոյ զակօն եստ կօսէ, չտօ տվօյ փէչաւռ վերիմ. տէրէ նէ վերիմ, կօսէ:

—Բաս ասի չտօ թէ դէլաւ:

—Իդի պօլիցա կօսէ,

Ջէր խուսկս չէի վիրջացրի, մէկ էլ տեհնիմ, էս միր աւուտկամը աուն էր մաի, պաշղօրաս գթիլ էր ու վաղէվաղ բիրից տըւից աֆիցրին:

—Վօտ կօսէ եւօ բաշղօրա, վօտ կօսէ եւօ փէչատ:

—Եսլի տակ կօսէ, տագդա իդի կուդա խօչիշ կօսէ:

—Ախմախ, կուդա ուէդէր պայդու, ասի. ժամ նեստու, նիչիվօյ նեստու:

—Տօ ձէնա կարէ, հիմի նուր մէկանց մէ ուրիշ չտո էլ չմօզօնէ կօսէ, ասից ննգիր աուտկար ու էլի յիդ աուն տարաւ ինձ:

Ա՞յ, ա՛յ, աշխարքի անդերութինը ինչի մէջն է, վուր ինձ կի չին աւտում ու իմ փէչատին կի աւտում ին:

Սա յաւ բան չէ. աղաք էսէնց բանիր չկար:

Աղաք մարթուն աւելի էին աւտում, ուչունքի հիմի մարթկերանց էլ չի բլի աւտալ, փէչատներին ին աւտում, վուր խիստ յաւ չէ, չունքի իս կարծում իմ, վուր Աստու ստիղծած մարթը ուփրօ աւտալու պըտուայ ունէ, քանց թէ մարթու շինած երկու մանէթանոց փէչատը:

Համա... համա չունքի Աստու ստածից վաւնչիչ չինք թօղի, էսու համա էլ կուլի, վուր էստուր եդնեն միր փէչատնէրուն էլ չը աւտան:

Էն ժուղը իսօ աշխարքը չուռ գուքայ:

Գասպար Ասլանուզեանց



## ՆՈՐ «ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ»

*Մեծ պասի նւէր բազմի հարուստներին*

—

Նայեաց սիրով, փողըգ գըթած,
Ի քո սահղծեալ հեզ մեծատանց.
Եւ բըզբանեակս սատիկանց,
Տուր պահապան մեզ աըկարաց.
Փրկեա զանձինս ի չանթժաց,
Ի խաւարի շըրջող գիւաց:
Զի ի տընչեան և գիշերի,
Տացուք քեզ փառս անլըռելի:

Երեւլի կարգս բառեղծեր,
Զազրաւռ հարուստ բաժանեցեր,
Ծաղեա մեզ զանձս ի գիշերի,
Ըզմամոնայս իմանալի,
Տուր բղհայցուածս բուրժուայի,
Ըզփոխ երից նըկանակի:
Զի ի տըւնչեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլըռելի.

Բամեայքս դըեզ ուէր աղաչեմք
Մեզ յօգնութիւննայեա, հայցեմք
Պահապան հարուստների
Անձանց մերոց լեր հովանի.
Առ զանձս ննջեմք արթուն բնութեամբ.
Գարծեմք չարիս ներգործութեամբ.
Էջ և առ մեզ ի գանձարանս
Եւ տուր ողջոյն քո ի քըսակս:

Սիրոյ քո փող արկեալ յերկիր
Բորբոքեցեր ի հոգիս մեր
Ըզցանկութիւնս մեր վառեցեր
Ագահութեամբ քով լըցուցեր
Ի քնոյ մահու մեզ զարթուցեր
Միաս բոցով քո փայլեցեր
Զի ընդ տաւօտըն հանգիցուք
Արըբեալ հոգով մացուք ի փառս:

—

Հայածեաք մէնջ ուէր նշանաւ փողին քով
Զգիմամարտ յեղափոխութիւն
Եւ մի տար յապականութիւն
Զմեր ժառանգութիւն...

Հոպ-Հոպ

## ԴՈՆԱԽԼՂՈՒԹԻՒՆ

Հայոց բարեկենդան էր. ուտելու, հարբելու օրեր էր: Ցամէն տեղ դոնախլղութին, յամէն տեղ հարսին, չորս թարաֆը դաւիր էր տիկ ու տկզար, դաւուլ ու զուռնայ: Ալ ինչ գլուխս ցաւցնեմ, բիթուն զաւիր էին բարեկենդան, քէֆ կէնէին կը ու հարբած քէֆի մէջ լող կուտային կը: Բարեկենդան է բերն, խաշեցին ու կերան, տապկեցին ու կերան, քերթեցին ու կերան, կրեցին ու կերան, սարախտան կերան, բիչըմ յեսն կերան, ճաշին կերան, կրակմասոցին կերան, կէս գիշերին կերան... Եւ այ քէֆի մէջ լող տալով, բերդանրերայ յընկայ մէ եդաւ դոնախլղութենիմ մէջ: Դոնաղները բիթուն պերմի նօմեր գինաական, բիթուն փիլիսոփաներ, բիթուն եարան եօլդաշներ: Սուփրի գլուխը նստիր էին Իգմիրլեանն ու Սուլթանը, ներքի գլուխը Սաթար խանն ու շահը, սուփրի կողքերը շարուեր էին, Բէնիկն ու Ցուսիկը, Սուրէնեանցն ու Ձարմասօն Երվանդ վարդապետը, Սամսոն Ցարութիւնեանցն ու Հ. Առաքելեանցը. Քամալեանցը, Բալասանեանցն ու Մելիք-Ադամեանցը, Սայաթնովան ու տիկին Մանուկեանցը, բարեգործական ու կուլտուրական ազանքը, Մանդինեանցը, Ադայեանցը, Տէր Ղեոնդեանցը, Աճարոնեանցը ու Ջերքէզեանցը, Վռամեանն ու Օրմանեանցը, Տէր Գիւտ Աղանեանցը, Տէր Առուսծատրեանցը, «Գործ»-ի ու «Մշակ»-ի ազանքը, Լէօն ու Քալանթարը... քանիմ հոգի ալ կային, անունց ֆամիլաները մոէս յիլաւ: Եւ հրամանքս Ղայլաղի Մարգարս ալ զառայ թամադայ: Եւ սրով կենացներ խմէի կը, Բէնիկը ճառերով զարդարէր կը, Քամալեանցը երգէր կը, դոնաղները ծափ կուտային կը ու տաշի ճվային կը: Բիթունից շատ խօսէր կը Վռամեանցը Վռամեանց դա, Վռամեանց. քանու ջաղացի գայլի վրացնէր կը, ու հետն ալ Օրմանեանցին պաչպչէր կը: Սամսոն Ցարութիւնեանցը համբուրէր կը Հ. Առաքելեանցին, Առաքելեանցը համբուրէր կը Տէր Գիւտին, աւիկ համբուրէր կը Քամալեանցին, Քամալեանցը համբուրէր կը Լէոնին, ալ ինչ յերկնցնեմ, գլուխդ՝ ցաւցնեմ, բիթուն յիրար կենաց խմէին կը, յիրար փաթըթուէին կը, ու յիրար համբուրէին կը: Աստնց ճաշ կենաց չէի՞նչ խմի: Ա՛ր, ա՛ր. չորս թարաֆէն ճվային կը: Ասպէս սիրով դոնաղլութին, ասպէս սիրով եարանեօլդաշներ, ասպէս սիրով անուշ յընկերներ հէ՜չ, հէ՜չ տեսիր չէի: Զայի ստաքանով յիրրար կենաց խմէին կը. անպէս յիրար ջան ու ջըրբան գլլէին կը, որ գիտես թէ 50 տարի է յիրար չէին տեսիր:

—Հօգուդ իմ մեռնիմ, Համբարձում ջան.

«Հաջան Սամսոն ջան, կեանքս, աչքիս լուսը:

—Անուշ ու թանկագին կենացդ Սարգիս ջան:

—Կենացդ անուշ, Գրիգոր ջան, աչքիդ զեմլեակս:

Տեսա՛ր սէրը, տեսա՛ր ուրը սեղանը, տեսա՛ր աղիդ յընկերութիւնը: Աղաս որ դուն իս, կերան պըծան, բռնեցին կլոր պար. եւ ալ պար պաշի Դավուլճին Կալաստըվեանցն էր, զուռնաճին Փալանդուզ Մկօն: «Վէվ որ զաղքի գըրի կռիկ» բերն ու թանու Զորս թարաֆէն ճվային կը. «Տաշի՛, տաշի՛, ծա՜փ ծա՜փ, հաջա՜ն, հա՜ջան, ուռա՜յ ուռա՜յ...»

Ղայլաղի Մարգար

### Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

—Հասկացար. ուրիշի չասես հա, գաղտնիք է. տասնեակ մարդիկ կարող են վտանգուել. .

—Ինչ է, երեխայ եմ... բայց դու որտեղից իմացար այդ վտանգաւոր գաղտնիքը։

—Ինձ իբրեւ գաղտնիք, Սամսոնն է ասել։

—Իսկ Սամսոնի՞ն։

—Նրան էլ իբրեւ գաղտնիք, Թոմասն է ասել։

—Հապա Թոմասի՞ն։

—Նրան էլ իբրեւ գաղտնիք. Սահակն է ասել, Սահակին էլ՝ Պետրոսը. Պետրոսին՝ Սիմէօնը. Սիմէօնին՝ Մանասը. իսկ Մանասն՝ ուզգակի գաղտնիքի աղբիւրից... սեւ գաղտնիք է հա, ոչ ոքի չասես. մարդկանց տուներ կը քանդուի։

### Գ Ի Ւ Ղ Ո Ւ Մ

—Այր, բէ, գէ, դա, եչ, զա, է, ըթ...

—Էդ ինչ ես տալիս, աղբար։

—Էհ, ինչ իմանամ, որդիս, կարդալ եմ սովորում։ Կարծես թէ առանց կարդալ իմանալու, պակաս էի «Ղարիբի զանձ» առնում, մեռել թաղում, կամ գայլի բերան կապում։ Ողորմած հոգի եղբայրս մեզ օծելիս, ինքի «զանձ» էլ չի տալ ուզել. հիմայ նոր հաւեր են գալիս եկել և պահանջում են, որ սովորենք. էդ ո՞վ է տեսել, որ գիւղի քահանան կարդալ իմանայ... էհ, ֆեալաղ, ֆեալաղ... այր, բէ, գէ, դա, եչ, զա, է, ըթ...

Գա. ռ.Ն

---

# ՔԱՂՔԻ—ՔԱՂԱՔ

IX

ՇՈՒՇԻ ՂԱԼԱ

*Դիրքը*

Շուշի Ղալէն գտնւում է ծովի մակերեւոյթից 6000—12000 ոտնաչափ բարձրութեան վրայ։

Բարձրութեան այս տարբերութիւնը կախուած է այն բանից, թէ ինչ շուշեցու հետ էք պատահում։ Կան շուշեցիներ, որոնց մակերեւոյթը ծովի մակերեւոյթից էլ ցածր է, կան և այնպիսիները, որոնց մակերեւոյթը Հիմալայեան լեռներից էլ բարձր է, բայց որովհետեւ ամեն մի շուշեցի ցանկանում է շատ բարձր երեւալ, դրա համար էլ մենք վերցրինք միջին մակերեւոյթ, որը թէեւ աշխարհագրօրէն սխալ է, բայց հոգեբանօրէն ճիշտ, դուցէ նոյնիսկ փոքր ինչ համեստացրած։

*Կլիման*

Շուշու կլիմայի մասին դժուար է դրական մի բան ասել, իսկ լսել կը նշանակէ վիրաւորել շուշեցուն և որովհետեւ ուելի վտանգաւոր բան չկայ, քան շուշեցուն վիրաւորելը, ուստի և հաստատում ենք, որ Շուշին բաւականին յիմար կլիմա ունի, օրինակ ձմեռը տաք է, ամառը հով, գարնանը մառախլապատ, աշնանը ни туды ни сюды. ուստի բնական է, որ կլիմայական այս խառնաշփոթ պայմանները մեծապէս ազդել են շուշեցիների բնաւորութեան և տրամադրութեան վրայ։

Եւ ճիշտ որ, շուշեցին բարի է երբ... բարկացած է և չար, երբ քեզ հետ... բարեկամ է, ուստի վստահել շուշեցու տրամադրութեան վրայ այնքան դժուար է, որքան նրա կլիմայի. գուցէ հէնց այս է պատճառը որ շուշեցին հէնց որ արբունքի է հասնում, առաջին միտքը լինում է փախչել Շուշուց... Բագու։

Գալով Բագու, շուշեցին իսկոյն յարմարւում է տեղական կլիմային, ադամներին, նաւթահորերին և... ռուս մաթուշկաներին։

Տեղական կլիմային յարմարուել—դա շուշեցու համար նշանակում է—աշխատել գիրք ձեռք բերել. ադամներին յարմարուել—կը նշանակէ ամեն բանում նրանց հետ համաձայնուել. նաւթահորերին յարմարուել—կը նշանակէ կամ փայատէր դառնալ,.. փող վճարելով՝ կամ նաւթի տուրաներից ծակեր բացել դէպի իր գրպանը. ռուս մաթուշկաներին յարմարուել դա արդէն շատ բարդ հասկացողութիւն է, որի մասին տեղեկութիւններ կարելի է ժողովել «Բագուի անկեալ կանանց օգնութեան եկող ընկերութեան» վարչութիւնների՞ց կամ տեղական բժիշկներից։

Սա ի հարկէ վերաբերում է այն շուշեցիներին, որոնք Բագու են ապրում և ի հարկէ ոչ բոլորին, այլ դրանց մի օրեէ 90 տոկոսին, ոչ աւել։

Գալով Շուշում ապրող շուշեցիներին դրանք արդէն ոչ այնքան շուշեցիներ են որքան Շուշաւայ-ղալացիներ։ Իսկ դա միեւնոյն բանը չէ։ Շուշաւ-ղալեցին աւելի մաքուր տիպ է. աւելի ինքնուրոյն։ Նա միշտ էլ առաջադէմ է... երբ պէտք է մի բան քանդել. որովհետեւ գիտէ, որ եթէ մի բան չքանդես, լաւ շինել դժուար է։ Բայց շուշի-ղալեցու ողջ դժաղդութիւնը նրանումն է, որ նա միշտ էլ քանդում է և երբեք շինում, մինչև որ վերջապէս որանից երեք չորս տարի առաջ քանդուեց ինքը Շուշի-ղալան։

Պատմութիւնն ասում է՝ թէ այս վերջին բանը առեղի ունեցաւ, շնորհիւ հայ-թրքական ընդհարումների և... շնորհիւ նրանց, որոնց մասին այժմ բարձրաձայն չեն խօսում և ոչ էլ գրում։ Բայց ես այդ կարծիքի չեմ. այլ կարծում եմ, որ Աստուած կամեցաւ մի քանի շարթում անել այն, ինչ որ պէտք է անէին շուշի-ղալեցիք մի քանի դարեր շարունակ—այսինքն պէտք է քանդէին Շուշին։

Այժմ մնում է շուշի-ղալեցիներին մի բան—այն է շինել վերջապէս Շուշին։ Բայց ինչպէս երեւում է, դեռ ես Շուշին լաւ չէ քանդուած, որովհետեւ Շուշու վերաշինութեան մասին, ամենեւին տեղեկութիւններ չկան։

Վերջացնելով Շուշի-ղալայի մասին ասածներս եզրափակում եմ.

ա) Շուշին բարձրանիստ է։
բ) Շուշեցին բարձրամիտ։
գ) Շուշին աւերակ է։
դ) Շուշեցին աւերող։
ե) Շուշին անբերրի է։
զ) Շուշեցին բերքատար։

Իսկ ընդհանրապէս լաւ մարդիկ են, թէ շուշեցիք և թէ մանաւանդ շուշի-ղալեցիք։

Որ ես ճիշտ եմ ասում—ներողութիւն կըրեք հարցնել իրենց շուշեցիներից և մանաւանդ շուշի-ղալեցիներից։

Սաթունէ

---

Չեռնուոր

Բժիշկ բերէք թող քննէ,
Հիւանդութիւն կայ՝ որոշէ.
Այդքան անմիտ խօսքեր լսելն՞
Մեծ ժողովին նէյ չէ վայել։
Եւ բժիշկը սրտոտ, դանակ
Ձեռքին, եկաւ հրապարակ.
Մէկ ականջից մինչեւ միւս
Կաշին կտրեց ու հանեց դուրս.
Սղոց առաւ, գանգը կտրեց,
Ամանի պէս բերան բացեց.
Նայեց մէջը եւ զարմացաւ,
Գլխի մէջը բան չգտաւ.
Մեծ գլուխը դատարկ էր,
Բօշ կառավարի ձայն կհանէր։

---

## ՀԱԶԱՐԻՑ ՄԷԿԸ

«Շարաթ, փետրուարի 21-ին տնձնապատնութեամբ վերջ տւեց իր կեանքին երկրորդ իգական գիմնազիայի VII դասարանի աշակերտուհի Եագինեւը, որովհետեւ մինչեւ չունէր վերջին կիսամեակի ուսման վարձը վճարել գիմնազիային.

Գիմնազիան 15 րուբլի յանկացրեց հանգուցեալ Եագինեւի դագաղը պսակով զարդարելու համար։»

*Լրագրներից*

Վերջ տւեց իր կեանքին մի դեռափթիթ ծաղիկ, որովհետեւ մինչեւ չունէր ուսման վարձը 35—40 րուբլի վճարելու։

Վերջ տւեց իր կեանքին մի սեր աղջիկ, որ Աւճարա կայարանից ձմեռն ցրտին, կամ ամառուան շոգին, շտապում էր Թիֆլիզ, կէս քաղցած, կէս կուշտ ու կիսամերկ ուսում առնելու և վերջը՝ հասարակութեան համար պիտանի լինելու։

Եւ նա հիմայ էլ պիտանի էր։

Նա դասերով կարողանում էր իր օրապահիկը հազիւ հազ հայթհայթել։ Եւ բան-

ւոր եղբօր տանը Աւճալարում, ապրում էր իր նամուսի պատճառով։

Եւ նոյն շաբաթ օրը, նրանից առաջ, նրանից էլ յետոյ, գիմնազիստներին կից հիմնուած ծնողական ժողովները, մեր բարեգործական ընկերութիւնները, մարդասէր տիկնայք և օրիորդներ, այդ աշխարհի հրէշները երեկոյթներ էին սարքում և կը սարքեն, որպէսզի չքաւոր աշակերտների ուսման վարձ վճարեն։

Դպրոցական վարչութիւններն էլ դասագինն են աւելացնում։

Վարժապետներն էլ բացի եղած, ոչ բարով առներից, ուրիշ ոչնչով չեն հետաքրքրւում

Նոյն վարժապետները «Կուլտուրականը» էլ են պահում, հարուստ աշակերտ աշակերտուհիներին իրենց տանն են պարապում իբր պատրաստում, որ վերջը հեշտութեամբ դասարանից դասարան փոխել տան։

Իսկ որը, թշուառ ու անճար Եացկևիչները միջոց չունենալու պատճառով, զուրկ են մնում այդ կաճառներից, այդ օրօրուած հոգիներից և... անձնատուր են լինում, այլևս չը հանդուրժելով այն անարդարանքին, որ լսում է, թէ դպրոցական վարչութիւնների և թէ ծնողական ժողովների «յառաջադիմութեան» շարժիչներից։

17—18 տարեկան օրը աղջկան տանում են.

—Գնաս փող բեր եւ ապա եկ ու սովորիր։

Եւ մեր գնաց այդ հասակի աղջիկը։

. . . . . . . . . . . . .

Եւ դեռ այդչափ ազէտ են, թէ վարչութիւնները և թէ ծնողական ժողովները, որ այդպիսի տառապանքութեան հետևանքը չեն իմանում և մենք յանձնում ենք նրանց մեր որդոց կրթութեան հոգսը։

Ու գնաց Եացկևիչը... և բարեկօր համարից այլևս չվերադառնալ դպրոց, այն դպրոցը ուր իր ամբողջ կեանքն է անցրել, այն դպրոցը, որտեղից երկու երեք ամսից յետոյ, պէտք է բաւարուէին հետամար մի թղթի կտոր ձեռքին, նամուսով ապրելու համար։

Եւ Եացկևիչը լաւ համարեց, առ միշտ հեռանալ այն տեղից և նրանցից, որոնք միմիայն 30 40 րուբլիով էին իրեն գընահատում։

Ամօթ դպրոցական այդ հաստատութիւններին։

Ամօթ ծնողական ժողովներին։

Ամօթ և բիւր ամօթ «յառաջնոր» մանկավարժներին, որոնք դեռ բաւ չէ, որ մարդասպանութեան անմիջական մասնակցողներ են, դեռ համարձակւում են և դագաղը զարդարել, պսակի համար 15 րուբլիներ յատկացնել։

Աւելի լաւ չէ՞ր լինի, այդ բարերարները տասնեհինգ րուբլու խիղճ առնէին, բայց ոչ, ներողութիւն, վաղուց է որ խիղճը մեզանում չի ճարւում և նամանավանդ ներկայ մեր մանկավարժական աշխարհում, ուր ամեն բան, «գրօշի» արժէք ունի, ուր ամենքը «գրօշի» համար են ապրում։

Աւգաակուսեի.

## Ֆ Ե Լ Ի Է Տ Օ Ն

## ԻՄ ԼՐԱԳԻՐԸ

# „ՁԻԲԻԼ“

*Հասարակական-անձնական եւ քաղաքական-բարոյական օրաթերթ*

Լոյս է տեսնում ամեն օր, բացի երկուշաբթի, երեքշաբթի, շաբաթ և կիրակի օրերից։

## ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Մեր շուրջը տիրող սօցիալ-էկօնօմիկ կատէգօրիաները զարնելով ֆէօդալ-արիստօկրատական տենդենցներին, շառաչիւնով յետ են զարնւում և ստեղծում պլատֆօրմերի մի կօնգլօմերատ։

Այսպիսի սպեցիֆիկ պայմաններում «Զիբիլը» կօլօսալ դեր ունի.մի կողմից նա արձագանք կը տայ պրօգրեսիվ էլէմենտների լէյրմօտիւներին, միւս կողմից կը ստեղծի արտօլիստ լօզունգներ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բալկանեան թերակղզում տիրող լարուած դրութիւնը պահանջում է լուրջ ուշադրութիւն։

Յօրհուրդ ենք տալիս Վիէննայի կաբինետին շատագովական քայլեր չանել, իսկ մեծ պետութիւններին դարձեալ զգուշացնում ենք status quo-ի վրայ աչալուրջ լինել, որով Եւրոպայի մթնոլորտը ազատուած կը լինի սպառնացող պերտուրբացիաներից։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*Դպրոցական գործը մեզանում*

Մենք քանիցս անգամ ասել ենք, որ Եւրոպան Ասիա չէ, որ քաղաքակրթութեան պահանջներն այլ են, խաւարամտութեանը՝ այլ, մենք նոյնպէս ասել ենք, որ արևը ծագում է արևելքից և ոչ արևմուտքից։

Սակայն մեր դպրոցական գործիչները շարունակում են լոյսի փոխարէն, խաւարին հետևել, ժամանակ է սթափուելու...։

## ԼՈՒՐԵՐ

Մեր աշխատակից Տիրացուեանը ժամանեց Թիֆլիզ։ Վաղը կարդենք նրա յօդուածը «Մրկների դերը «Զիբիլի» խմբագրատան մէջ». առ մի լուրջ գիտական ուսումնասիրութիւն է։

—

Մեր ստացած տեղեկութիւններից երևում է՞որ գաւառներում ինտելլիգենցիան համախմբւում է մեր ծրագրի շուրջը, ամեն տեղ հիմնելով «նորանոր» ակումբներ։

## Բ Ա Ն Ա Կ Ռ Ի Ւ

*Մեր վերջին պատասխանը Մոծակեանին*

«Թմբուկ» լրագիրը շարունակում է իր կեղտերն արտայայտելը... Արհամարհանք.— այս է մեր միակ պատասխանը «Թմբուկի» ղեկավար պրօվօկատօր, խարդախ, չարչի, ատացակ, տիրացու, շանտաժիստ, բանագող և անամօթ Մոծակեանին...։

«Զիբիլը» միշտ բարձր կը պահի ճշմարտութեան և ազնուութեան դրօշը և հեռու կը մնայ փողոցային թերթերի ցեխից...։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակ Պօլսից։ Անցեալ շաբաթ պ. Ագասունի դասախօսութիւն մը բրաւ «ազատութեան» մասին. ներկայ էր հոծ բազմութիւն երկու սեռի անձերէ։ Առանձնապէս աչքի կը ընկնէին գեղապատուելի Բարձրաստիճանեան էֆէնդին, անոր հրաշագործ տիկինը, հրաշալի աղջիկը, շնորհալի քենին և գեղեցկութեան տիպար քոյրը։

## Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պետերբուրգ.—Կովկասեան հարցադրման ժամանակ Պուրիշկևիչն ասաց, «Զիբիլ» թերթը Հայկական Թագաւորութեան գլխաւոր օրգանն է և զարմանում է, որ կառավարութիւնը մինչև այժմ աչքաթող է արել այդ խիստ վտանգաւոր լրագիրը։


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Խմբագրութեան մէջ ծախւում են փթերով

«ԶԻԲԻԼԻ»

Մնացած համարները

100 փթից աւել առնողներին զիջում 30 տոկոս

—

Նոյն տեղը պահանջւում են լաւ տեսակի մկան թակարդներ։



Խմբագիր—Հրատարակիչ ՔՆԹՈՑԵԱՆ։

Արտագրեց

ՉԼԵավ Օհան

## ՉՈՐՍ ԲԱՆԵՐ

(Արտագրած մի շատ հին տոմարից)

Աշխարհում չ ո ր ս բաներ կան, որոնք

1) Չեն յագենում

Հուրը, հողը, գժողքը և կինը։

2) Աղքատացնում են մարդուն

Կանայք, թղթախաղը, վատ ընկերը և գաւերը։

3) Վրդովում են հոգու քաղաքականութիւնը

Անկարգ սէրը, արբեցողութիւնը աղահութիւնը և ատելութիւնը։

4) Բարեկամ են համարում.

Բարեկամ քաղցի, բարեկամ սեղանի, բարեկամ պաշտօնի և բարեկամ հաւատարիմ։ Առաջինը հրաժարւում է, հէնց որ չքւում է քաղցը. երկրորդն անհետանում է, հէնց որ վերացւում է սեղանը. երրորդը տեւում է, քանի կայ պաշտօնը. չորրորդը միշտ յարատև է։

5) Դրդիչ են բարեբաղդութեան

Ճանը, երկինքը, յոյսը և սէրը։

6) Բորբոքում են բղձախոհութիւն

Զօրեղ խմիչքները, քաղցրահամ կերակուրները, կանանց ընկերակցութիւնը և անզործութիւնը։

7) Տանում են դէպի ողջախոհութիւն

Սակ ջուր խմելը, հով կերակուր ուտելը, կանանցից հեռու մնալը և միշտ աշխատելը։

8) Չեն զողացւում

Գիտութիւնը, կամքը, արհեստը և խելքը։

9) Ընկերութիւն չեն սիրում

Մի քաղաքում հրամայելը, իր՝ կնոջ հետ կենակցելը, վատակ շահելը, իր ամանից ուտելը։

10) Ընկեր են պահանջում

Տարակուսանքի մէջ ընկածը, նոր պաշտօն առողը, ճանապարհը և ճանապարհորդը։

11) Խաբում են մարդուն

Ճահաժիրութիւնը, քաղցր խօսքը, խելքի պակասութիւնը, կնոջ խորամանկութիւնը։

12) Խաղաղ կեանք են պարգևում

Տեսնելը, լսելը, լսելը և համբերելը։

3) Երկար չեն տևում

Կուսական մարդը, անխոհեմ բանակը, անիրաւարար ժառանգողը, չափազանց մոխողը։

14) Ցղամարդիկ պահանջում են կանանցից

Դէմքի և մարմնի գեղեցկութիւն, ողջախոհութիւն, համեստութիւն, շնորհք։

15) Կանայք ձգտում են

Ունենալ գեղեցիկ և երիտասարդ ամուսին, ունենալ շատ որդիք, ունենալ շատ և պատւական շոր, ունենալ իշխանութիւն ամբողջ ընտանիքի վրայ։

16) Վաղաժամ սպանում են մարդուն

Գեղեցիկ կինը, տրտմութիւնը, թոյնը և ապականուած օդը։

17) Անդառնալի են

Կեանքը, որ բաժնւում է. համբաւը, որ աղտոտւում է. անգամը, որ կորչում է։

18) Դիւրափոփոխ են

Կնոջ կամքը, բաղդի յաջողութիւնը, երեսի գոյնը, հողմերը։

19) Դէպի տուն են ձգում մարդուն

Կնոջ սէրը, տան վայելչութիւնը. ընկեր չունենալը, վատ ժամանակը։

20) Տանից հալածում են մարդուն

Ծուխը, զարշահոտութիւնը, կատւի կաթիլը և կնոջ բարկութիւնը։

Գ.Ն.-Լ.

## ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Մասն առաջին

Ի. Թոփչեան

Գինն է 60 կ.

—

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 13 14 և 15

Բ. Հ. Կ. Մխիթեան հրատ. սեկցիա

գիրքը 30 կ.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

XVIII գիրք

1908 թ. № 2

Ն. Բայազէտի գաւառի ընդարձակ քարտէզով

Գինն է 1 ր. 50 կ.

—

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

գինն է 1 ռուբ. 25 կոպէկ։

Երեքշաբթի մարտի 3-ին, Թիֆլիսի Արքունական թատրոնում կը կայանայ, իր տեսակի մէջ եզակի մի ՀԱՄԵՐԳ, յօգուտ վերջին պատերազմում սպանուած և կորած ամեն ազգի զինւորների որբերի։

Եւ որովհետև մեր ընթերցողները միշտ սիրում են լաւ բան, ուստի առաջարկում ենք անպատճառ գնալ այդ օրը թատրոն և տոմսակ գնել։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПОЧЕРКИ

Самые неправильные и скверные исправляю ЗАОЧНО каждому въ 1 уроковъ. На бѣглые конторскіе и изящно красивые. Пробное письмо шрифтовъ образцы почерковъ и условія высылаются за 5 семи-коп. марокъ. Обращайтесь по русски по адресу: профессору каллиграфіи А. Коссодо, Дерибасовская домъ АРМАНА ОДЕССА





Ա. ՐԱԲԻՆՈՎԻՉ ՏՓԽԻՍՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա. ՐԱԲԻՆՈՎԻՉ—ՏՓԽԻՍՈՒՄ

Երիտասարդներ, ու շ ա դ ր ու թ ի ւ ն՛!!

Մանուֆակտուրայի ԲԵԼԳԻԱՅԻ համար՝ կան ազամանդի, արմատի հրաշալի մատանիներ, մեծ քանակութեամբ, ոչ միայն լաւ յատկութեան, այլ՝ ամեն տեսակի, նոյն գնանոց, ինչ գին որ դուք ցանկանում էք և ձեր՝ գրպանին ձեռնտու է վճարել։

Ն Շ Ա Ն Ի Հ Ա Մ Ա Ր

Ձեզ ինչ է հարկաւոր. ոսկեայ, կանացի ժամացոյցներ. ամեն գործարանի, կը՝ գտնէք մեզ մօտ-հատը 20-ից 120 ռուբ. կանացի ժամացոյցներ, ոսկի շղթաներ, ամենագեղեցիկ և բազմազան նոր ձևերով, մեծ քանակութեամբ ունենք և ծախում ենք բարեխղճաբար քաշի գնով։

ՀԱՐՍԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Ձեր ուշադրութիւնն ենք հրաւիրում, հաւատացէք մեզ, և մեզանից գնեցէք ազամանդեայ և արմատի ՄԱՏԻԿՆԵՐ, հրաշալի, բոցավառ փայլով. հաւատացնում եմ. ով մեզանից մի անգամ գնեց՝ բաւական կը մնայ և միշտ կը գնէ։

Երիտասարդներ, ուշադրութիւն!!!

Ա. Ր Ա Բ Ի Ն Ո Վ Ի Չ

ֆիրման գոյութիւն ունի 1868 թւից՝

Թիֆլիզ, Թամամշեվի քարւանսարա։





## „ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ"

գրախանութում վաճառւում են

| | ր. | կ. |
|---|---|---|
| Բաչունի Մ. Տարրաբանութիւն տեսական և արւեստական, 3 հատոր | 4 | — |
| » Տարերք երկրագործութեան, տեսական և գործնական | 1 | — |
| » Մեղւաբուծութիւն | — | 75 |
| » Կաթնաբանութիւն | — | 75 |
| » Շերամաբանութիւն | — | 50 |
| Տագաւորեան Ն. Տօքտ., Տիեզերք և իր կազմութիւնը | 1 | — |
| Բէշմիշեան Ա., Նախագիտելիք բուսաբանութեան | — | 80 |
| Բլօք Մ., Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան | — | 60 |
| Դարվինի Չ., Աներևոյթ հողագործ (կարմիր ճիճու) | — | 07 |
| Տարանտինովի Ն., Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում | — | 03 |
| Մանր վարկի հաստատութիւնները | — | 05 |
| Գալէմքարեան Հ. Գ. վ., Մամագործութիւն արդի յառաջադիմութեան մէջ, 21 սևերագիծ պատկերով | — | 25 |
| Թուրակին Ն. Զրոյցներ բնութեան մեծ և ահեղ երևոյթների մասին | — | 15 |
| Դը Վարինյի, Օդը և կեանքը | — | 10 |
| Ղազարեան Գ. Հողը և նրա մշակութիւնը | — | 20 |
| » Սերմ և ցանք | — | 25 |
| Արարատեան Ս. եպիսկ., Համառօտ բարոյագիտութիւն | — | 40 |
| Թուխմանեան Կ. Ս., Աւետարանական տնտեսական աշխարհ | 1 | 50 |
| Բասմաջեան Կ. Յ., Օրւան մը մէջ լուսանկարիչ ըլլալ | — | 20 |
| Բէրնշտէյն, Ծաղիկ և պտուղ | — | 08 |
| Երեմեան Ս. Հ. Նոր կենդանաբանութիւն և մարդաբանութիւն, պատմական և նկարագրակ. | 1 | 50 |
| Մելիք-Շահնազարեան Կ. Կ., Վազի մշակութիւն | 1 | — |
| Զաւարեան Ս., Անասնապահութիւն և կաթնատնտեսութիւնը մեր և ուրիշ երկրներում | — | 20 |
| Սարուխանեան Ա., Պրովիզոր, Ներկատու բոյսեր և դրանց ներկերը. պրակ I | — | 25 |
| Ղազարեան Գ. Անասնապահութ. և կաթնատնտ. | — | 40 |
| Բերզան Ե., Մեղուների խնամատարութիւն, մեղւապահի օրացոյցը, 76 նկարով | 1 | — |
| Գևորգեան Յ. Այգետիրական օղեգործութիւն | — | 40 |
| Մելիք-Շահնազարեան Կ. Կ. Ուղեցոյց գործնական շերամապահութեան | — | 40 |
| Սահակեան Մ. Հ. Համառօտ երկրաչափութիւն | 1 | 50 |
| Բոգդանով Մ. պրոֆ. Թռչունների աշնանային տեղափոխութիւնը և բնի ու ձւի դրս | — | 05 |
| Մեծատուրեան Գ. Ընտրութիւն կաթնատուների կամ կաթնատու կովերը ճանաչելու մէջ. | — | 15 |
| Գրիգորեան Զար., Ջուր, տարրական նախագիտելիք բնական գիտութեան, 11 պատկերով | — | 35 |
| Ֆօսթեր, Բնախօսութեան տարրական դասընթացք 20 նկարներով | — | 30 |
| Ճեմարան գիտելեաց, կազմած | 2 | 50 |
| Մէնէվիշեան Գ. Վ. Ե. Կենդանաբանութիւն | 1 | 60 |
| » » Բուսաբանութիւն | 1 | — |
| » » Հանքաբանութիւն | 1 | — |
| Գօսեխին, Մեղւաբուծութեան ձեռնարկ 108 պատ. | — | 75 |
| Կլէյն, Գործնական կաթնատնտեսութիւն, թարգմ. Ա. Մխիթարեանի, 48 նկարներով | — | 50 |
| Լունկևիչ, Երկնքի և երկրի մասին | — | 10 |
| » Երկրաշարժ և հրաբխային լեռներ | — | 15 |

Դիմել՝ Тифлисъ, Г. И. Галстяну, книжный магазинъ „Гуттембергъ"



## ԱԼՄԵԶԱ

ՉԸ ԼՍՒԱԾ ՄԻՋՈՑ ԱՏԱՄՆԱՑԱՒԻ ԴԷՄ

Ալմեզան երկու բոպէում հանգստացնում է ատամնացաւը։

Ալմեզան բուժում է լնդերքի հիւանդութիւնները և կանգնեցնում է արիւնը։

Ալմեզան պնդացնում է լնդերքը, ատամները–

Ալմեզան բուժելուց յետոյ ատամները չեն ցաւում։

Ալմեզան առ միշտ ոչնչացնում է բերնի հոտը։

Ալմեզան անհրաժեշտ միջոց է ամեն մի ընտանիքում։

Ալմեզան բազմաթիւ շնորհակալական նամակներ.

Ալմեզան բազմաթիւ ընծաներ ցուցահանդէսներում։

Ալմեզան գրասենեակում, այս միջոցով բժշկում ենք ձրիաբար, որպէսզի բոլորին համոզենք նրա բուժիչ լինելուն։

Ալմեզան բացառապէս վաճառւում է Ախոբաձէի պահեստում, Թիֆլիս։

Ալմեզան խնդրում ենք չը շփոթել ատամի ուրիշ դեղերի հետ։

Ալմեզան կարելի է ստանալ գլխաւոր պահեստից։

Тифлисъ, Пушкинская ул. № 15

Отдѣленіе Баку. Марійская ул. домъ № 19 противъ Малаканскаго сада. рядомъ парикмахерской Цицхвидзе.





Թոյլատր. մայրաք. բժ. վարչ. վկ. № 3475

Արտասահմանից պէտք է դրամը անպատճառ փոխադրել։

Փոքրն. սրւակի գինն է 40 կոպ.։

Նորմալ սրւակը 1 ր. 20 կոպէկ։

Ներկայացուցիչ համայն Ռուսաստանի Ի. Գ. Ախոբաձէ, Թիֆլիս։



Առաջին քաղաքամասում, Մցխեթսկայա փողոցի վրայ—շատ մօտիկ Զէմլեմերնիյ, Ագնւականների, արական և աղջկերանց գիմնազիաներից

Ծ ա խ ւ ո ւ մ է

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԵՒ ԳՈՂՏՐԻԿ

**ՏՈՒՆ № 25**

Բանկային պարտք 6880 ր.

ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԴԻՄԵԼ

Սուդեբնայա փողոց № 36, դատարաններին կից.

Գնդապետ Տէր Ղազարեանին



ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»**

շաբաթաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

տարեկան 3 րուբլի

կէս տար 1 ր. 50 կ.

Հասցէն՝ Тифлисъ,

Редакція «Гюхатнтес»



Юморо-сатирическій журналъ

„ХАТАБАЛА"

Печатается исключительно на бумагѣ

*Таворищества*

**П. С. СЕРГѢЕВА**

Складъ бумагъ въ Тифлисѣ находящейся на Дворцовой ул. въ домѣ Сараджева во дворѣ.

Цѣны бумагъ Фабричныя

# ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ

# ԳՐԱՄՄԱՖՕՆ

# Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

## ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՄԵՆԱՆՈՐ ԿՐԿՆԱԵՐԵՍ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

# „Զ Օ Ն Օ Ֆ Օ Ն"

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԳԵՐ

ՀԱՅԵՐԷՆ, ՎՐԱՑԵՐԷՆ և ԹՈՒՐՔԵՐԷՆ

ԳՆԵՐԸ: փոքրը 75 կ. — մեծը 1 ր. 50 կ.

101006. Հօրեղբօր պատմածը, դերասան Աւետեան։
64060. Ջան մարալ ջան, ժողովրդ. երգ տիկ. Աննա և Վաղարշակ։
102224. Ուրբըշի հաւսով, Փիրումեան։
62274. Անիի ողբը, Շահրամեան։
102225. Սիրահարի թաշկինակը, Փիրումեան։
62275. Ախ, իմ Հայաստան, տղամ. ձայն.
102226. Անդիտան, կառ. Փիրումեան
62276. Ձմեռ, Շահրամեան։
104675. Հոյ, նազանըմ. ժողովրդական երգ. կատար. Ներսիսեան ուսումնար. խումբը։
108059. Աստուծոյ լուսոյ, աղօթք զատնուլով արիս։
2—102992. Դիմացդիտ, Փիրումեան։
2—102990. Անփոյթ նստատի տիկ. Աննա և Վաղարշակ։
2—102991. Մոզա է, քմ, Փիրումեան։

108058. შახნაზი, ზურნით.
102229. სულიკო, გოგო აკკ. საზანდარი.
104504. შენ ხარ ვენახი, სასულიერო საგალობელი, მუს. მღ. კარბელაშვილისა, ხორო ცამციევისა.
102227. ჰარიალალე, გოგო აკკ. საზანდარი.
103040. აბ სულო-სულო, ბარბარე
108016. კინტოური, დუდუკი, ზურნა.
108017 შალახო, დუდუკი, ზურნა.
2—102993. ორთავ თვალის სინათლევ, გოგო აკკ. საზანდარი.
104677. მრავალ-ჟამიერ, ხორო ცამციევისა.
2—102995. ოდელია, კარგარეთელი.
104676. ქართული მარში, ხორო ცამციევისა.
2—102994. თავო ჩემო, ბედი არ გიწერია, კარგარეთელი.
63414 ბაქო ქალაქი, ადგილობრივი კილო, სიტყვები რუსული, ქალის ხმა

102228. تصنیف گیلانی
63119. ماهنی قرازاق دخله ج واروارا
109264. هنگی جناب ترسیس قارقانوف شلاخو ولزگی
63120. ماهنی آی ادغ داغلار ج آنا
2—102996. جناب محمد خلیل اوف وهاب
2—102997. سه گاه جناب محمد خلیل اوف
2—102998. تصنیف کیلال
63416. قحار دیاتی کیشی سسی
109348 جرگه ج آوانس کمانچه
10937. مقامت شرقی عورغانوف تار ایله
63415. کیشی سسی ساز چامافیله عراتی
108060. صاحی نقراط زورنه ایله



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

# „ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ



*Ամենալաւը Աշխարհում*

*Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածուող նիւթերից։*

ԱՆԳԱՑՄԱՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕ-
ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

# ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

„ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ

1888

---

Мебельный магазинъ

**БР. ГАЛУМОВЫХЪ,**

*Мадатовская ул., противъ Александровского сада*

Имѣется постоянно большой выборъ:

УМЫВАЛЬНИКОВЪ: англiйскихъ и московскихъ.

КРАВАТЕЙ: англiйскихъ, подносныхъ и мѣстной работы.

ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантазiи

МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо", модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.

СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемiрно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, спецiально для столовыхъ.

ГРОМАДНѢЙШIЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библiотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**

---

**ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ ЖИВОПИСЦЕВА въ г. Орлѣ.**



ԾԱՂԿԻ ՀՈՐԹԱՆՈՑ. Դէտրիտի գինը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խողովակի մէջ—5 մարդու համար՝ 5 կոպ.։ Մի բաւըլայից պակաս—չէ վաճառւում։ Ճանապարհածախսի համար—30 կոպ։ Երեք բաւըլայից աւելի ուղղակի ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶԵՂՉ մինչև 20 տոկոս. Հասցէն՝ Օրեօլ քաղաք. Ծաղկի հորթանոց Ժիվօպիսցեւի

---

«ԽԱԹԱՐԱԼԱ»-Ի

Կոմպլեկտներ փառաւոր կազմած

1906 թուի արժէ 5 ր.

1907 թուի » » » 7 ր.

1908 թուի » » » 7 ր.

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխավճար 3 ր. որոնց կուղարկենք վերադիր վճարով։

---

ПЕРВАЯ

художественная хромо-литографiя

# С. БЫХОВА

*Тифлисъ, Головинскiй просп. около цирка*

Печатаются всевозможныя литографскiя работы въ разныхъ стиляхъ.

Также всевозможные ярлыки спецiально для водочныхъ и винныхъ складовъ и т. п.

ПО САМЫМЪ УМѢРЕНЫМЪ ЦѢНАМЪ

Работы исполняются лучшими европейскими мастерами

## ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Ա՛յ թէ ինչպէս են անյայտանում ազգային հաստատութիւնների հաշւեմատեանները.

## ՆԻԿԻՏԻՆՆԵՐԻ ՑԻՐԿՈՒՄ




Բաբաջանեանցի մենամարտին

# ՕՊԵՐԱՑԻԱՅԻՑ ՅԵՏՈՅ



Ա՜յ թէ ինչու այդ յիմարաբանաչափ հոտած էր. ուղեղի տեղ մէջն՝ ուրիշ բան է եղել...

## ՈՐԲԱՆՈՑԻ ԱՌԱՋ



—Այս աղջկան գտայ դուրսը փողոցում, նա որբ և անտէր է, գուցէ կընդունէիք նրան որբանոցում։

—Ոչ, չենք կարող. տեղ չկայ. բայց եթէ տասներկու րուբլի տաք ամսական, այն դէպքում կարող ենք վերցնել պահել

—Ես միջոց չունիմ, աղքատ աշխատաւոր եմ

—Ես էլ մեղաւոր չեմ։

## ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՒ ՈՎՔԵՐ ԵՆ ՁՐԻ ԹԵՐԹ ԿԱՐԴՈՒՄ



Ցրւիչը.—Աղա ջան, վերցնում ես, դէ՞ փողը տուր գնամ էլի։

Ընթերցողը.—Սպասի, տեսնեմ ինչ կայ գրած, թէ որ հետաքրքիր է, կը վերցնեմ մի շայից խմ չեմ ուտի։

Ցրւիչը.—Հիմայ էլ ինչ հետաքրքիր կը լինի, երբ ամբողջը կարդացիր։

Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ